

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՖԱԿՈՒԼՏԵՏ _____ Բնական գիտությունների
ԱՄԲԻՈՆ _____ Քիմիայի և կենսաբանության
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ _____ 053101.00.6 Քիմիա
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ _____ 053101.02.6 Դեղագործական քիմիա
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ _____ Քիմիայի բակալավր
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎ _____ առկա
(Առկա, հեռակա, հեռավար)
ԿՈՒՐՍ _____ 4-րդ կուրս
ԿԻՍԱՍՅԱԿ/ՈՒՍ. ՏԱՐԻ _____ 2-րդ կիսամյակ 2023-2024 ուսումնական տարի

Հաստատված է ամբիոնի նիստում
(արձ. թիվ _____ 2024թ.)

Քիմիայի և կենսաբանության ամբիոնի վարիչ, ք.գ.թ., դոցենտ՝ **Ա. Ղազարյան**

Հաստատված է բնական գիտությունների ֆակուլտետի
գիտական խորհրդի նիստում
(արձ. թիվ _____ 2024թ.)

Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.թ., դոցենտ՝ **Հ. Գրիգորյան**

Պրակտիկայի մեթոդիստ՝ _____ Հովսեփյան Անժելա
(Ստորագրություն) (Ա.Ա.Հ., պաշտոն, գիտ. աստիճան կոչում)

Վանաձոր 2024թ.

Արտադրական պրակտիկայի ծրագիր

1. Պրակտիկայի նպատակը

Պրակտիկայի նպատակներն են.

1.1. Մասնագիտական`

- գործնական ճանապարհով ձևավորել իրատեսական վերաբերմունք մասնագիտության նկատմամբ,
- աջակցել մասնագիտական հմտությունների ձևավորմանը:

1.2. Ուսումնամեթոդական`

- բացահայտել մասնագիտական գործունեություն իրականացնելու պատրաստականության աստիճանը,
- նպաստել ուսանողների կողմից մասնագիտական գործունեության վերլուծական հմտությունների ձևավորմանը:

1.3. Դաստիարակչական`

- խթանել հետաքրքրություն մասնագիտական գործունեության նկատմամբ,
- նպաստել ուսանողի մասնագիտական գործունեության ակտիվացմանը, ուսանողների անձնային և մասնագիտական որակների զարգացմանը,
- ձևավորել անձնային ուղղվածություն և դիրքորոշում մասնագիտական գործունեության նկատմամբ,
- ձևավորել ինքնագնահատման, ինքնակրթության և ինքնակատարելագործման կարողություններ:

1.4. Փորձարարական`

- նպաստել մասնագիտական խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցման զարգացմանը,
- զարգացնել տեսական և գործնական գործունեության մոդելավորման և իրականացման ունակությունները:

2. Արտադրական պրակտիկայի խնդիրները

Պրակտիկայի հիմնական խնդիրներն են.

- 2.1. խորացնել և ամրապնդել պրակտիկայի ընթացքում կիրառվող մասնագիտական գիտելիքները, նպաստել մասնագիտական կարողությունների զարգացմանը, ձևավորել մասնագիտական հմտություններ, կոմպետենցիաներ,
- 2.2. պայմաններ ստեղծել մասնագիտական հետազոտական ընդունակությունների զարգացման համար,
- 2.3. նպաստել մասնագիտական ստեղծագործական հետաքրքրությունների և ընդունակությունների զարգացմանը,
- 2.4. նպաստել մասնագիտական գործունեության պլանավորման, նախագծման, կազմակերպման, իրականացման, վերլուծության, արժևորման, գնահատման և ինքնագնահատման կարողությունների ձեռքբերմանը,

3. Պրակտիկայի հաստատությունը, վայրը.

Արտադրական պրակտիկան անց է կացվում «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում:

Պրակտիկայի օրացուցային պլան

Ամիս, ամսաթիվ	Արտադրական պրակտիկայի աշխատանքների բովանդակությունը	Ժամերի քանակը
02.02.2024	Ծանոթացում արտադրական պրակտիկայի ծրագրի հետ	6
05.02.2024	Ծանոթացում ներհիվանդանոցային դեղատան աշխատանքների հետ	6
06.02.2024	Ծանոթացում Էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական ԱՐՄԵԴ համակարգի հետ	6
07.02.2024	Ծանոթացում ԱՐՄԵԴ համակարգի միջոցով Էլեկտրոնային դեղատոմսերի կազմման և դեղերի տրամադրման գործընթացի հետ	6
08.02.2024	Ծանոթացում դեղերի ստացման, գրանցման և տրամադրման գործընթացի հետ	6
09.02.2024	Ծանոթացում դեղերի դուրս գրման գործընթացին հիվանդանոցի տարբեր բաժանմունքների համար	6
12.02.2024	Ծանոթացում դեղերի արտադրության և որակի վերահսկման վերաբերյալ փաստաթղթերի հետ:	6
13.02.2024	Ծանոթացում տարբեր խմբերի դեղերի (հոգեմետ, թմրաբեր ցավազրկողներ, ուռուցքաբանական խմբի դեղեր, հատուկ ջերմաստիճանային ռեժիմի պայմաններում պահպանվող դեղեր և այլն) դեղատանը պահպանման պայմանների հետ:	6
14.02.2024	Ծանոթացում դեղատան պահեստներին	6
15.02.2024	Ծանոթացում հոգեմետ դեղերի դեղատոմսով դուրս գրման կարգին	6
16.02.2024	Ծանոթացում ուռուցքաբանական խմբի դեղերի դեղատոմսով դուրս գրման կարգին	6
19.02.2024	Ծանոթացում կլինիկական լաբորատորայի՝ բինոկուլյար Էլեկտրոնային մանրադիտակների աշխատանքի հետ՝ կցված տպիչին	6
20.02.2024	Ծանոթացում ավտոմատ անալիզատորների աշխատանքի հետ / որակական, քանակական անալիզ, PH կայունության ստուգում/	6
21.02.2024	Ծանոթացում ավտոմատ ժամանակակից հեմոտոլոգիական անալիզատորների աշխատանքի հետ	6
22.02.2024	Ծանոթացում շճաբանական հետազոտությունների մեթոդների հետ /ցենտրիֆուգա, տրադիցիոն, ազլյուտինացիոն /	6
23.02.2024	Ծանոթացում ռենտգեն ապարատի / Siemens /աշխատանքի հետ:	6
26.02.2024	Ծանոթացում կոմպյուտերային տոմոգրաֆի / Siemens / աշխատանքի հետ կոնտրաստային և ոչ կոնտրաստային նատիվ մեթոդով:	6
27.02.2024	Ծանոթացում Էխոսրտագրության սարքավորման աշխատանքի հետ	6
28.02.2024	Արտադրական պրակտիկայի ամփոփում	6
29.02.2024	Արտադրական պրակտիկայի փաստաթղթերի կազմում	6

5. Կոմպետենցիաների ցանկ,

Արտադրական պրակտիկայի արդյունքում ուսանողը ձեռք կբերի.
Ընդհանրական կոմպետենցիաներ

ա) Գործիքային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ԳԿ)

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ3 հենքային և ընդհանուր գիտելիքներ,

ԳԿ8 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),

բ) Միջանձնային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ՄՁԿ)

ՄՁԿ2 թիմային աշխատանք,

ՄՁԿ3 միջանձնային ունակություններ,

ՄՁԿ4 միջառարկայական թիմում աշխատելու ունակություն,

ՄՁԿ5 այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն,

ՄՁԿ6 պացիենտների հետ շփվելու ունակություն,

գ) Համակարգային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ՀԳԿ)

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,

ՀԳԿ4 նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

2. Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (այսուհետև՝ ԱԿ)

մասնագիտական կոմպետենցիաներ.

ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

ԱԿ3 համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

ԱԿ10 քննադատորեն գնահատել և մեկնաբանել տեսության և պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,

ԱԿ11 տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանալ մեկնաբանել հետազոտության արդյունքները,

ԱԿ13 ցուցաբերել ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս,

ԱԿ14 տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

6. Արտադրական պրակտիկայի ավարտին ուսանողը պետք է

Գիտենա

- Լաբորատորիաներում աշխատանքի կարգի և անվտանգության տեխնիկայի կանոնները:
- դեղատան տեսակները, ֆունկցիաները , դեղատների կազմակերպչական աշխատանքները
- Մանիտարական պայմանների ապահովման հիմնական դրույթները:
- Դեղագրքերի, ֆարմակոպեաների հետ տարվող աշխատանքները:
- Դեղատոմս, տեսակները, դեղատոմսում թույլատրվող կրճատումները:

Կարողանա

- կատարել փորձեր՝ օգտվելով տարբեր սարքավորումներից
- որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ
- մշակել տարբեր թեմաներ
- վերլուծել դեղատոմսերը

Տիրապետի

- փորձարարական աշխատանքների կատարման մեթոդներին
- վերլուծություն կատարելու մեթոդական հմտություններին:

7. Պրակտիկայի ընթացակարգը

Դ/ք 4-րդ կուրս, (առկա), 2-րդ կիսամյակ, 4 կրեդիտ

8. Պրակտիկայի ղեկավար(ներ)ի պարտականությունները և գործառույթների նկարագրությունը

Պրակտիկայի արդյունավետությունը կախված է պրակտիկայի ղեկավարի կանոնակարգված գործունեությունից: Պրակտիկայի ղեկավարը ուսանողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հրահանգներ, բացատրում է պրակտիկայի նպատակը, խնդիրները, բովանդակությունը, ծանոթացնում է անցկացման կարգին և կանոններին:

Արտադրական պրակտիկայի ղեկավարի պարտականություններն են.

- ✓ կազմում է աշխատանքային և օրացուցային պլաններ,
- ✓ մասնակցում է պրակտիկային նախորդող կոնֆերանսին և խորհրդատվությանը, որի ընթացքում ծանոթացնում է պրակտիկանտներին պրակտիկայի ծրագրին, պրակտիկայի խնդիրներին, ուսանող-պրակտիկանտի գործառույթներին, պարտականություններին, պրակտիկայի հաշվետու փաստաթղթերին, արտադրական պրակտիկայի օրագրի վարման կարգին,
- ✓ պրակտիկայի անցկացման հաստատության ղեկավարին և մասնագետին ծանոթացնում է պրակտիկայի մասնագիտական ծրագրին,
- ✓ պրակտիկանտներին օգնում է պրակտիկայի անհատական պլանը կազմելու գործում՝ ելնելով պրակտիկայի ծրագրում ներկայացված նպատակներից, խնդիրներից, իր կազմած օրացուցային, աշխատանքային պլաններից,

- ✓ աջակցում է պրակտիկանտներին հաստատությունում պլանավորված աշխատանքների կատարման ընթացքում, վերլուծում, քննարկում է դրանց արդյունքները,
- ✓ հետևում է պրակտիկանտների հաճախմանը, բացակայության դեպքում տվյալները ներկայացնում ամբիոնի վարիչին,
- ✓ պատասխանատվություն է կրում պրակտիկայի հաշվետու փաստաթղթերի ժամանակին և մեթոդապես ճիշտ վարման համար,
- ✓ պրակտիկայի ավարտին վերլուծում է պրակտիկանտի կատարած աշխատանքը, բնութագրում է և գնահատում նրան,
- ✓ պրակտիկայի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում դեկանատ է ներկայացնում իրեն կցված բոլոր ուսանողների՝ պրակտիկայի ծրագրով պահանջվող հաշվետու փաստաթղթերը,
- ✓ մասնակցում է պրակտիկայի պաշտպանությանը, ուսանողի պրակտիկայի վերջնական գնահատականի ձևավորման գործընթացին,
- ✓ կազմում է հաշվետվություն, որում վերլուծում է իրականացրած պրակտիկայի արդյունքները, պրակտիկան բարելավելու նպատակով առաջարկություններ է ներկայացնում ամբիոնի վարիչին:

9. Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները.

- ✓ Մասնակցում է պրակտիկային ներածական կոնֆերանսին,
- ✓ կատարում է պրակտիկայի ծրագրով, անհատական պլանով նախատեսված բոլոր աշխատանքները՝ օգտվելով պրակտիկայի անմիջական ղեկավար(ներ)ի խորհրդատվությունից՝ պրակտիկայի անցկացման վայրում լինելով օրական 6 ժամ,
- ✓ պատասխանատվություն է կրում կատարած աշխատանքների և դրանց արդյունքների համար,
- ✓ հետևողականորեն վարում և նախապատրաստում հաշվետու փաստաթղթերը,
- ✓ պարտավոր է ենթարկվել պրակտիկան իրականացնող հաստատության աշխատանքային ներքին կանոնակարգին, պահպանել աշխատանքի և տեխնիկայի անվտանգության կանոնները,
- ✓ պրակտիկայի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում մեթոդիստին է ներկայացնում պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը,
- ✓ մասնակցում է պրակտիկայի պաշտպանությանը, ներկայացնում պրակտիկայի արդյունքները:

10. Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը

Արտադրական պրակտիկայի դեպքում՝ հանձնում են արտադրական պրակտիկայի օրագիր:

11. Պրակտիկայի գնահատումը

Պրակտիկայի գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով, որի բաղադրիչներն են պրակտիկայի ընթացքում կիրառած գիտելիքները, ձեռք բերած կարողությունները, հմտությունները, կոմպետենցիաները, ինչպես նաև պրակտիկային ուսանողի հաճախումը և պրակտիկայի պաշտպանության մասնակցությունը:

Պրակտիկայի պաշտպանությունը կատարվում է հանձնաժողովի ներկայությամբ: Ուսանողը 10 բուլետի ընթացքում ներկայացնում է կատարված աշխատանքը:

Գնահատման չափանիշներն են՝

- հաստատության (կազմակերպության) գործնական գործունեության մեջ կիրառվող ժամանակակից տեսության և մեթոդների իմացության մակարդակը
- ձեռք բերված գիտելիքները իրական մասնագիտական գործունեության մեջ ինքնուրույն կիրառելու հմտությունների ձևավորման աստիճան

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները

(գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի)

Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորը	Գնահատումը
1. Հաճախելիություն	0 - 10	
2. Առարկայական իմացություն	0 - 20	
3. Մասնագիտական հմտություններ, Կարողություններ		
• անալիզի արդյունքները ճշգրիտ գրանցելու և մաթեմատիկական հաշվարկներ կատարելու հմտություն	0 – 10	
• անալիզ կատարելու համար անհրաժեշտ սարքեր, սարքավորումներ ընտրելու, հավաքելու և օգտագործելու կարողություն	0 – 10	
• տվյալ անալիզի կատարման մեթոդիկայի հմտություն	0 – 10	
4. Ֆիզիկո-քիմիական անալիզի կատարում		
Քիմիական անալիզի կատարում	0–20	

անալիզի տարբեր սարքերով		
5. Պաշտպանություն	0 - 20	
6. Ընդհանուր միավոր	100	

Գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի	
գերազանց	85-100
լավ	71-85
բավարար	58-70
չստուգված	57 և ցածր